



ΣΧΟΛΙΚΗ ΧΡΟΝΙΑ 2026-2027
ΠΛΑΙΣΙΟ ΜΑΘΗΣΗΣ ΚΑΙ ΠΡΟΓΡΑΜΜΑΤΙΣΜΟΣ
ΑΡΜΕΝΙΚΑ Γ΄ ΛΥΚΕΙΟΥ
Β΄ ΤΕΤΡΑΜΗΝΟ

ՀԱՅԵՐԵՆ

ΣΤΟΙΧΕΙΑ ΜΑΘΗΜΑΤΟΣ – ΠΛΑΙΣΙΑ

ΕΒΔΟΜΑΔΙΑΙΕΣ ΠΕΡΙΟΔΟΙ ΔΙΔΑΣΚΑΛΙΑΣ: 4**ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ****Διδακτικά εγχειρίδια-Βιβλιογραφία:**

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ 2

Հեղինակ՝ Յարութիւն Զիւրաբեան

Բառարան

Գործնական Բառարան Հայերէն Լեզուի

Հեղինակ՝ Հայր Անդրանիկ Կոստան

Υλικά και μέσα που θα χρησιμοποιήσουν οι μαθητές κατά τη διδασκαλία του μαθήματος:

Նշուած թեմաներով լաւելելալ նիւթեր ըստ պահանջի, նաեւ լեզուական աշխատանքներ եւ քերականական ու բառագիտական վարժութիւններ պիտի տրուին աշակերտներուն համացանցէն, ինչպէս նաեւ ուսուցիչին կողմէ պատրաստուած: Յաւելելալ թեմաներ կարելի է աւելցնել ըստ ուսուցիչի հայեցողութեան, նկատի ունենալով աշակերտներուն պահանջը եւ հետաքրքրութիւնները: Դ ա ս ա լ ա ն դ ու թ ե ա ն ց ը ն թ ա ց ք ի ն կ ՚ ը լ ա յ ա ր ու ե ս տ ա գ ի տ ու թ ե ա ն օ գ տ ա գ օր ծ ու մ:

ΓΕΝΙΚΟΣ ΣΚΟΠΟΣ (ΓΕΝΙΚΟΣ ΔΕΙΚΤΗΣ ΕΠΙΤΥΧΙΑΣ)

Հայերէն լեզուի դասերուն նպատակն է բարձրացնել աշակերտներուն լեզուի իմացութեան մակարդակը՝ կարենալ այն արդիւնաւետ կերպով օգտագործելու կրթական, ընկերային եւ աշխատանքային միջավայրի մէջ: Հայերէն լեզուի դասերը կը միտին աւելի բարձր մակարդակով զարգացնել անոնց իմացութիւնը հայ մշակոյթի, հայ արժեքներու եւ աւանդութիւններու: Մայրենի լեզուի ուսուցումը ներդրում է անոնց ինքնութեան համար: Այս դասերը կու տան աշակերտներուն հարուստ փորձառութիւն ըմբռնելու եւ գնահատելու տարբեր մշակութային իրականութիւններ, բազմալեզու եւ բազմամշակոյթ աշխարհին մէջ եւ ունենալու իրենց ներդրումը անոնց զարգացման համար: Հայերէնի դասընթացը միտում ունի զարգացնել աշակերտներու հմտութիւնները, ստեղծագործական կարողութիւնները, քննադատական մտածողութիւնը, ինքնազարգացման ձգտումը եւ կարողութիւնը, 21րդ դարու համապատասխան՝ ըլլալու գործօն քաղաքացիներ:

ΑΝΑΜΕΝΟΜΕΝΑ ΜΑΘΗΣΙΑΚΑ ΑΠΟΤΕΛΕΣΜΑΤΑ (ΔΕΙΚΤΕΣ ΕΠΑΡΚΕΙΑΣ)

Աշակերտները պիտի կարենան՝

- Հետեւիլ ու հասկնալ երկար եւ բարդ թեմաներով կրթական եւ այլ դասախօսութիւններ, քննարկումներ ու կատարել նշումներ:
- Կարդալ եւ անհրաժեշտ տեղեկութիւնները գտնել եւ գրել գիրքերէ, յօդուածներէ, գրութիւններէ:
- Կարդալ տարբեր թեմաներով գիրքեր, հասկնալ կարեւոր գաղափարները եւ խօսիլ ու գրել այդ մասին:
- Իրենց բնագաւառին մէջ բարդ նիւթերու շուրջ լաւ կառուցուածքով բանախօսութիւն գրել ու ներկայացնել:
- Մասնակցիլ սահուն եւ ինքնաբոլիս լեզուով տարբեր նիւթերու վերլուծումներու եւ քննարկումներու՝ տալով իրենց տեսակետները եւ պատճառաբանելով:
- Տարբեր աղբիւրներէ կարդալ, հաւաքել ու ամփոփել անհրաժեշտ տեղեկութիւնները:
- Գրել իրենց պատմուածքները եւ բանաստեղծութիւնները տարբեր թեմաներով, արտայայտելով իրենց մտածումները եւ զգացումները:

Οι μαθητές με την ολοκλήρωση του μαθήματος θα πρέπει να είναι σε θέση να

Աշակերտները պիտի կարենան

-Հայրենիքի եւ ծննդավայրի նշանակութիւնը եւ դերակատարութիւնը իրենց կեանքի մէջ ներկայացնել բերանացի եւ գրաւոր կերպով:

-Կարդալ, ուսումնասիրել, տեղեկութիւն հաւաքել եւ խօսիլ ու գրել հայկական Սփիւռքի մասին:

-Գրական գործերու ընդմէջէն հաղորդակից դառնալ արմատներուն, յուշերու ընդմէջէն՝ անցեալին եւ ներկայացնել իրենց սորվածները:

-Վերլուծել բերանացի եւ գրաւոր կերպով տարբեր թեմայով դիտած շարժարուեստ եւ թատրոններ:

-Գիտութեան եւ արհեստագիտութեան վերաբերող նիւթերով կատարել քննարկումներ եւ իրենց մտածումները ներկայացնել գրաւոր:

-Ժամանակակից նիւթերով պահանջուած աշխատանքներ կատարել օգտուելով յօդուածներէ եւ լրատուամիջոցներէ ու ամփոփած նիւթը ներկայացնել բերանացի եւ գրաւոր:

-Պատմութեամբներու եւ բանաստեղծութիւններու հիման վրայ կատարել վերլուծական բերանացի եւ գրաւոր աշխատանքներ, նաեւ ներշնչուելով՝ գրել ինքնուրոյն փոքր պատմութեամբներ եւ բանաստեղծութիւններ:

ΔΕΙΚΤΕΣ - ΕΝΟΤΗΤΕΣ
Իրականութիւններ Ծննդավայր Հայրենիք Սփիւռքներ Հայկական Սփիւռք
Գրականութիւն Ինքնակենսագրութիւն Արմատներ Կարօտ Յուշեր
Կրթութիւն Գիրքեր Բանաստեղծութիւններ Պատմութեամբներ Լեզուներ Մասնագիտութիւններ Հմտութիւններ
Արուեստներ Շարժարուեստ Թատրոն
Գիտութիւն եւ Արհեստագիտութիւն Համակարգիչ Բջիջային
Ժամանակակից Նիւթեր

ΑΞΙΟΛΟΓΗΣΗ	
ΓΡΑΠΤΗ Ενιαία γραπτή αξιολόγηση στο τέλος του τετραμήνου	ΠΡΟΦΟΡΙΚΗ / ΣΥΝΤΡΕΧΟΥΣΑ (από τον/τη διδάσκοντα/ουσα)
ΜΟΡΦΗ	ΜΟΡΦΗ
Հայերէն լեզուի Թննութիւն կիսամեակի Աւարտին (135 վայրկեան)	i. Աշակերտին մասնակցութիւնը դասարանին մէջ -Հետաքրքրութիւնը դասին հանդէպ եւ ամենօրեայ բերանացի մասնակցութիւնը, նախաձեռնութիւն ունենալը, գործակցութիւնը տարբեր աշխատանքներու, նաեւ ընդհանուր ներդրումը դասի ընթացքին ii. Տնային աշխատանք - Դասարանին մէջ բացատրուած նիւթի հիման վրայ հարցում-պատասխան, բառագիտութեան վարժութիւններ, լեզուական աշխատանքներ, շարադրութիւն, դասաւանդուած եւ նախապէս տեղեկացուած նիւթի վրայ գրաւոր ստուգում iii. Դասարանային գրաւոր աշխատանք - Դասաւանդուած նիւթի հիման վրայ հարցումներ, բառագիտութեան վարժութիւններ, լեզուական աշխատանքներ, շարադրութիւն, դասաւանդուած եւ նախապէս տեղեկացուած նիւթի հիման վրայ գրաւոր ստուգում iv. Ուսումնասիրական եւ ստեղծագործական աշխատանք - Անհատական կամ խմբային, տրուած նիւթի եւ առաջադրանքներու հիման վրայ v. Յաւելեալ կամաւոր աշխատանք - Դասանիւթին առնչուած սակայն դասէն անկախ կամաւոր մասնակցութիւն կամ աշխատանք հայերէնի հետ կապուած

[illegible]

[illegible]